ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/86

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
Բողոք բերող՝ «Իմմունոֆարմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Պատվիրատուի ներկայացուցիչներ՝ Ա. Միքայելյանի, Ռ. Մեհրաբյանի
«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցում, լաբորատոր սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 06.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի» կարիքների համար՝ լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.11.2019թ.-ն և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 12.11.2019թ.-ին, 21.11.2019թ.-ին և 29.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 29.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.12.2019թ.-ին:

2. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետևնա՝ Ընթացակարգ):

«ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը նշանակված է 07.11.2019թ.:

Համաձայն Ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի»՝ գնման առարկայի՝ «Գազային քրոմատագիր սպասարկված բացահոնային դետեկտորով, մազանոթային աշտարակներով և ավտոմատացված նմուշարկչով. կոմպլեկտը ներառում է՝ գազերի միացման և ֆիլտրման անհրաժեշտ հանգույցները և սարքի ծրագրային ապահովումը», համար սահմանվել են հետևյալ տեխնիկական պարամետրերը.

Աշտարակի վառարան (թերմոստատ)

- Երկու և ավելի աշտարակի տեղադրման հնարավորություն
- Աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը - +4-ից ÷ 450 °C
- Ջերմաստիճանի կարգավորման ճշտությունը - ոչ պակաս 0.1 °C
- Տաքացման արագությունը - ոչ պակաս 120 °C/րոպե
- Սառեցման ժամանակը - 450 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3,5 րոպե
- Փուլի տևողության առավելագույն ժամանակը - 999.99 րոպե
- Ջեռոցում ծրագրային տաքացման հնարավորություն - ոչ պակաս քան 20 ռեժիմ:

Խորշիկներ Split/splitless համակարգ՝ ոչ պակաս քան երկու խորշիկ.

- Հաստատուն ճնշմամբ աշխատանք
- Ճնշման/հոսքի էլեկտրոնային ղեկավարում
- Սեպտաների օդափոխություն
- Ճնշման տիրույթը՝ 0.001 – 150 psi
- Ներկառուցված արտահոսքի/խցանման, ճնշման անկման և բաժանված հոսքի սահմանափակման ախտորոշման հնարավորություն
- Առավելագույն աշխատանքային ջերմաստիճան՝ 450 °C
- Գազի հոսքի բաժանման(split-ի) արժեքը – ոչ պակաս 7500:1
- Գազերի հոսքի տիրույթներ՝ 0 – 500 մլ/ր – ազոտի համար,
- 0 - 1250 մլ/ր – ջրածնի համար

Մազանոթային աշտարակներ.

1-ին աշտարակ՝ 30 m, 0.25 mm, 0.25-0.5 μm , PTA5 կամ համարժեք,

2-րդ աշտարակ՝ 30 m, 0.25 mm, 0.25-0.5 μm , DB-WAX կամ համարժեք.

Բոցա-իոնային դետեկտոր (FID)

- Առավելագույն աշխատանքային ջերմաստիճան - ոչ պակաս 450 °C
- Հայտնաբերման (detection) նվազագույն արժեքը (ստանդարտ՝ տրիդեկանի համար) - < 1.4 pg C/s
- Գծային դինամիկ տիրույթը - ոչ պակաս 107
- Մինչև 500 Հց հաճախությամբ տվյալների գրանցման հնարավորություն
- Օդ-ի հոսքի միջակայկաքը - 0-800 ml/min
- H2-ի հոսքի միջակայկաքը - 0-100 ml/min
- Օժանդակող գազի հոսքի միջակայկաքը- 0-100 ml/min

Այլ բնութագրեր

- LAN ինտերֆեյսի հնարավորություն

- *Հեռակա միացման/անջատման հնարավորություն*
- *առնվազը 2 USB պորտի առկայություն*

Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ

Ավտոմատացված հեղուկային նմուշարկչի տարողունակությունը-առնվազը 16 հատ 2 մլ ծավալով վիալ նմուշների համար

Ներարկման ծավալները

• ավելի քան 100 μL ստանդարդ ներարկման ասեղներով հնարավորություն

• 250/500 μL օպցիոնալ ներարկման հնարավորությամբ բազմածավալ ներարկման հնարավորություն

Քրոմատագրաֆիկ արդյունավետություն

- *Մակերեսի վերարտադրելիություն - քիչ քան 1% RSD*
- *Ներակման վերարտադրելիություն – ավելի լավ քան 0.008% RSD*
- *Ներակման գծայնություն – քիչ քան 1% RSD*
- *Տեղափոխում – քիչ քան մեկ մասնիկ 100000-ից*

Ստանդարտ և աշտարակի վրա ներարկման մեթոդներ

Ամբողջովին ծրագրավորվող տարալուծման, արտահանման և ներարկման հնարավորության առկայություն

Արագ ներարկումներ - ոչ ավելի քան 100 մվ-ից

Հատուկ ադապտերի միջոցով 250 և 500 μL ներարկիչները տեղադրման հնարավորություն

Օպերատորի ընտրությամբ 2 կամ 3 շերտանի նմուշի հավաքման հնարավորություն (sandwich)

Ստանդարտ դիրքից պակաս և ավելի նմուշառման խորության ընտրություն հնարավորություն 0-ից 15 լվացման հնարավորություն A և B լուծիչների համար

Ներարկման արագությունների կարգավորման հնարավորություն-արագ/դանդաղ/ծրագրավորվող

Ծրագրային ապահովում

Լիցենզավորված ծրագրային ապահովման տրամադրում: Այն պետք է ապահովի՝ քրոմատագրաֆիկ վերլուծության տվյալների հավաքագրումը, մշակումը ու պահպանման հնարավորությունը, անալիտիկ սարքավորման ամբողջական համատեղելիությունը GLP, GMP ստանդարտների հետ:

Անվտանգություն և սերտիֆիկացիա

Վկայագրումը Համապատասխանի հետևյալ միջազգային անվտանգության չափանիշներին՝

• *Նախագծված եւ արտադրված լինի համաձայն ISO 9001-ի որակի վերահսկման համակարգի պահանջների,*

• *Ապահովի համապատասխանություն ANSI / UL 61010-1, Միջազգային էլեկտրատեխնիկական Հանձնաժողովի (IEC) 61010-1,60101-2-010, 60101-2-081, էլեկտրամագնիսական Համատեղելիության (EMC) և Ռադիոհաճախականության Միջամտություն (RFI)՝ CISPR 11 / EN 55011: 1-ին դասԱ և IEC / EN 61326 կանոնակարգերի (կամ համարժեք ԵԱՏՄ TP TC 004/2011 և TP TC 020/2011) պահանջներին:*

<u>Մատակարարում, Կարգաբերում, Երաշխիքային և Տեխնիկական Սպասարկում</u>

Ներառում է առաքումը, մաքսազերծումը, ԱԱՀ, 1 տարի երաշխիքային սպասարկում, տեղադրում, կարգաբերում, սպասարկող անձնակազմի ուսուցանումը և ուսուցման սերտիֆիկատների տրամադրումը:

Երաշխիքային և ընթացիկ տեխնիկական սպասարկման իրականացում՝ ՀՀ-ում պաշտոնական գրանցված և սերտիֆիկացված մասնագետի կողմից:

Մատակարարում - ձեռքբերման պայմանագրի կնքիմուց սկսած 20 օրվա ընթացքում:

Տեխնիկական սպասարկում - անսարքությունների մասին իրազեկումից հետո դրանց վերացում 2 օրվա ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակովմասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը...:

Գտնում ենք, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Օրենքի վերոշարադրված պահանջների խախտում:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերով ապրանքի տեխնիկական բնութագիրը նկարագրված է հնարավորինս մանրամասն, սակայն խնդիրը նրանում է, որ առանձին բաղադրիչները և դրանց հնարավորությունների պարամետրերում ներկայացված են այնպիսի պահանջեր (որոշ դեպքերում առանց շեղման), որոնք այլընտրանքի հնարավորություն չեն տալիս և ենթադրվում է, որ այդ պահանջները սահմանելիս՝ պատվիրատուն հիմք է ընդունել որևէ կոնկրետ ֆիրմայի պատկանող մոդելի տվյալներ, սակայն շուկայում առկա են ձեռքբերվող ապրանքին ֆունկցիոնալ առումով բացարձակապես չզիջող բազմաթիվ այլ մոդելներ, որոնք իրենց պարամետրերով տարբերվում են պահանջվող տվյալներից, սակայն լիովին կարող են ապահովել լաբորատոր սարքերի օգտագործման արդյունքում պատվիրատուի կողմից ակնկալվող արդյունքները :

Օրինակ՝ որպես ապրանքի սառեցման ժամանակ սահմանվել է հետևյալը՝

- *ոչ ավել քան 3,5 րոպե (իսկ ինչու ոչ 3,6 րոպե, կամ 4 րոպե)*
- *ճնշման տիրույթը 0,001-150psi և այլն (իսկ ինչու ոչ 0,001-120psi):*
- *Գազերի հոսքի տիրույթներ 0-500 մլ/ր-ազոտի համար,*
- *0-1250 մլ/ր-ջրածնի համար,*
- *Գծային դինամիկ տիրույթը ոչ պակաս 10,*
- *Օդի հոսքի միջակայքը 0-800 ml/min և այլն:*

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 13-րդ հոդվածի 2-րդ մասերը, խնդրում ենք պարտավորեցնել «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի» կարիքների համար՝ լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:»:

Ի լրումն ներկայացված բողոքի 20.11.2019թ.-ին «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալը.

«06.11.2019թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-Լ0-2019/86 բողոքով «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոք, որով հայտնել է, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում:

Մասնավորապես, ըստ բողոքաբերի, Ընթացակարգի հրավերը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի և 13-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի պահանջներին:

Ստորև ներկայացվում է վերլուծություն, որը ապացուցում է, որ Հրավերով պահանջված ապրանքը՝ լաբորատոր սարքը՝ առաջին չափաբաժնի մասով, իր բոլոր պահանջված պարամետրերի համակցությամբ, համապատասխանում է բացառապես Agilent 7890 սարքի պարամետրերին, իսկ նույն ֆունկցիան կատարող այլ արտադրողների նմանատիպ սարքերը տարբեր պարամետրերով դուրս են մնում Հրավերի տեխնիկական բնութագրի շրջանակներից:

PARAMETER հրավերով նախատեսված	***Agilent 7890***	***Shimadzu QP 2010 PLUS***	***Shimadzu GC 2030Nexis***	***THERMO Trace 1300***	***CHROMATECK 5000/9000***
Ճնշման տիրույթը՝0.001-150PSI	*Ճնշման տիրույթը՝0.001-150PSI Համապատասխանում է*	*0 to 970 kPa=0-140PSI Չի համապատասխանում*	*0-1034Kpa =0-150psi Չի համապատասխանում*	*0-145PSI Չի համապատասխանում*	*0,36 ծo 1,25 Mna=0-145 PSI Չի համապատասխանում*
Գազերի հոսքի տիրույթներ՝ 0 – 500 մլ/ր – ազոտի համար, 0-1250 մլ/ր –	*Գազերի հոսքի տիրույթներ՝ 0 – 500 մլ/ր – ազոտի համար,*	*0-1200մլ/ոոպե տարանջատված չի ազոտի կամ ջրածնի համար Չի համապատաս*	*Գազերի հոսքի տիրույթներ՝ 0 – 600 մլ/ր – ազոտի համար, 0 - 1300մլ/ր – ջրածնի համար*	*5-1200մլ/ոոպե տարանջատված չի ազոտի կամ ջրածնի համար Չի համապատաս*	*Գազերի հոսքի տիրույթներ՝ 5 – 500 մլ/ր – ազոտի համար, 5 - 500 մլ/ր – ջրածնի համար*

ջրածնի համար	0- 1250 մլ/ր – ջրածնի համար Համապատասխանում է	խանում	Համապատասխանում է	խանում	Հնարավորություն հասնելու մինչև 1200մլ րոպե ոչ ստանդարտ կոնֆիգուրացիայում Չի համապատասխանում
Սառեցման ժամանակը - 450 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3,5 րոպե	Սառեցման ժամանակը - 450 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3,5 րոպե Համապատասխանում է	Սառեցման ժամանակը - 450 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 8 րոպե Չի համապատասխանում	Սառեցման ժամանակը - 450 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3,4 րոպե Համապատասխանում է	Սառեցման ժամանակը - 450 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 4 րոպե Չի համապատասխանում	Սառեցման ժամանակը - 400 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 5 րոպե Հնարավորություն հասնելու մինչև 3,5րոպե Չի համապատասխանում
Բոցա-իոնային դետեկտոր (FID) Մինչև 500 Հg հաճախությամբ փվալների գրանցման հնարավորություն Օդ-ի հոսքի միջակայկաքը - 0-800 ml/min H2-ի հոսքի միջակայկաքը - 0-100 ml/min Օժանդակող գազի հոսքի միջակայկաքը- 0-100 ml/min	Բոցա-իոնային դետեկտոր (FID) Մինչև 500 Հg հաճախությամբ փվալների գրանցման հնարավորություն Օդ-ի հոսքի միջակայկաքը - 0-800 ml/min H2-ի հոսքի միջակայկաքը - 0-100 ml/min Օժանդակող գազի հոսքի միջակայկաքը- 0-100 ml/min Համապատասխանում է	Գազի հոսքի մասին փվալները բացակայում են սակայն զգայունությունը ոչ ավել 1.5պգ է և նույնպես չի համապատասխանում	Մինչև 500 Հg հաճախությամբ փվալների գրանցման հնարավորություն Օդ-ի հոսքի միջակայկաքը - 0-1000ml/min H2-ի հոսքի միջակայկաքը - 0-100 ml/min Օժանդակող գազի հոսքի միջակայկաքը- 0-100 ml/min Համապատասխանում է	Մինչև 300 Հg հաճախությամբ փվալների գրանցման հնարավորություն Օդ-ի հոսքի միջակայկաքը - 0-500ml/min H2-ի հոսքի միջակայկաքը - 0-100 ml/min Օժանդակող գազի հոսքի միջակայկաքը- 0-50 ml/min Չի համապատասխանում	Մինչև 300 Հg հաճախությամբ փվալների գրանցման հնարավորություն Գազի հոսքի մասին փվալները բացակայում են Չի համապատասխանում

Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ Ավտոմատացված հեղուկային նմուշարկչի տարողունակությունը- առնվազը 16 հատ 2 մլ ծավալով վիալ նմուշների համար Ներարկման ծավալները • ավելի քան 100 μL ստանդարդ ներարկման ասեղներով հնարավորություն • 250/500 μL օպցիոնալ ներարկման հնարավորությամբ բազմածավալ ներարկման հնարավորություն Քրոմատագրաֆիկ արդյունավետություն Մակերեսի վերարտադրելիություն - քիչ քան 1% RSD Ներակման վերարտադրելիություն – ավելի լավ քան 0.008% RSD Ներակման գծայնություն	Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ Ավտոմատացված հեղուկային նմուշարկչի տարողունակությունը - առնվազը 16 հատ 2 մլ ծավալով վիալ նմուշների համար Ներարկման ծավալները • ավելի քան 100 μL ստանդարդ ներարկման ասեղներով հնարավորություն • 250/500 μL օպցիոնալ ներարկման հնարավորությամբ բազմածավալ ներարկման հնարավորություն Քրոմատագրաֆիկ արդյունավետություն Մակերեսի վերարտադրելիություն - քիչ քան 1% RSD Ներակման	Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ Ավտոմատացված հեղուկային նմուշարկչի տարողունակությունը- առնվազը 12 հատ 1.5 մլ ծավալով վիալ նմուշների համար Ներարկման ծավալները 0.1 ~ 8.0 μl, 0.1μl steps (using 10ul syringe) 0.5 ~ 40 μl, 0.5 μl steps (using 50ul syringe) 2.5 ~ 200 μl, 2.5 μl steps (using 250ul syringe Քրոմատագրաֆիկ արդյունավետություն մասին տվյալներ բացակայում են Տեխ բնութագրում արտագրված է բացառապես Agilent 7650A Ներարկչի բնութագրից Տես հղում https://www.agilent.com/cs/libra	Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ Ավտոմատացված հեղուկային նմուշարկչի տարողունակությունը- առնվազը 12 հատ 1.5 մլ ծավալով վիալ նմուշների համար Ներարկման ծավալները 0.1 ~ 8.0 μl, 0.1μl steps (using 10ul syringe) 0.5 ~ 40 μl, 0.5 μl steps (using 50ul syringe) 2.5 ~ 200 μl, 2.5 μl steps (using 250ul syringe Քրոմատագրաֆիկ արդյունավետություն մասին տվյալներ բացակայում են Տեխ բնութագրում արտագրված է բացառապես Agilent 7650A Ներարկչի բնութագրից Տես հղում https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-0150EN.pdf Չի համապատասխանում	Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ Ավտոմատացված հեղուկային նմուշարկչի տարողունակությունը- առնվազը 8 հատ 1.5 մլ ծավալով վիալ նմուշների համար Ներարկման ծավալները • Standard: 10 μL • Optional Micro-volume: 5 μL • Optional Nano-volume: 0.5 μL Տեխ բնութագրում արտագրված է բացառապես Agilent 7650A Ներարկչի բնութագրից Տես հղում https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-0150EN.pdf Չի համապատասխանում	Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ Ավտոմատացված հեղուկային նմուշարկչի տարողունակությունը- առնվազը 22 հատ 2 մլ ծավալով վիալ նմուշների համար Ներարկման ծավալները • ավելի քան 100 μL ստանդարդ ներարկման ասեղներով հնարավորություն • 250 օպցիոնալ ներարկման հնարավորությամբ բազմածավալ ներարկման հնարավորություն Տեխ բնութագրում արտագրված է բացառապես Agilent 7650A Ներարկչի բնութագրից Տես հղում https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-0150EN.pdf Չի համապատասխանում

– քիչ քան 1% RSD Տեղափոխում – քիչ քան մեկ մասնիկ 100000-ից Ստանդարտ և աշտարակի վրա ներարկման մեթոդներ Ամբողջովին ծրագրավորվող տարալուծման, արտահանման և ներարկման հնարավորության առկայություն Արագ ներարկումներ - ոչ ավելի քան 100 մվ-ից Հատուկ ադապտերի միջոցով 250 և 500 μL ներարկիչները տեղադրման հնարավորություն Օպերատորի ընտրությամբ 2 կամ 3 շերտանի նմուշի հավաքման հնարավորություն (sandwich) Ստանդարտ դիրքից պակաս և ավելի նմուշառման	վերարտադրելիություն – ավելի լավ քան 0.008% RSD Ներակման գծայնություն – քիչ քան 1% RSD Տեղափոխում – քիչ քան մեկ մասնիկ 100000-ից Ստանդարտ և աշտարակի վրա ներարկման մեթոդներ Ամբողջովին ծրագրավորվող տարալուծման, արտահանման և ներարկման հնարավորության առկայություն Արագ ներարկումներ - ոչ ավելի քան 100 մվ-ից Հատուկ ադապտերի միջոցով 250 և 500 μL ներարկիչները տեղադրման	ry/datasheets/public/5991-0150EN.pdf Չի համապատասխանում			

խորության ընտրություն հնարավորություն 0-ից 15 լվացման հնարավորություն A և B լուծիչների համար Ներարկման արագությունների կարգավորման հնարավորություն - արագ/դանդաղ/ծրագրավորվող	*հնարավորություն Օպերատորի ընտրությամբ 2 կամ 3 շերտանի նմուշի հավաքման հնարավորություն (sandwich) Ստանդարտ դիրքից պակաս և ավելի նմուշառման խորության ընտրություն հնարավորություն 0-ից 15 լվացման հնարավորություն A և B լուծիչների համար Ներարկման արագությունների կարգավորման հնարավորություն - արագ/դանդաղ/ծրագրավորվող*				

Այսպիսով, վերոհիշյալ վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են պատվիրատուի կողմից հնչեցված արտադրող ընկերությունների համապատասխան քրոմատագրերը և հայտնաբերվել են վերոշարադրված տարբերությունները: Նշված վերլուծությունը վկայում է, որ Հրավերի առաջին չափաբաժնով պահանջված ապրանքը՝ լաբորատոր սարքը, իր բոլոր պահանջված պարամետրերի համակցությամբ, համապատասխանում է բացառապես

Agilent 7890 սարքի պարամետրերին, իսկ նույն ֆունկցիան կատարող այլ արտադրողների նմանատիպ սարքերը տարբեր պարամետրերով դուրս են մնում Հրավերի տեխնիկական բնութագրի շրջանակներից:

Ուստի պնդում ենք, որ Հրավերով նշված պարամետրերով հնարավոր չէ բավարարել մեկ այլ ընկերության արտադրանքներով:

Գտնում ենք, որ պատվիրատուն պարտավոր է ուսումնասիրել պահանջվող ապրանքի բնութագրի համապատասխանությունը միևնույն գնային կարգի սարքավորումների միջև և ընտրել միջինացված պարամետրեր, որպեսզի գնման գործընթացին կարողանան մասնակցել նաև նմանատիպ ապրանք առաջարկող այլ ընկերություններ:

Հրավերով նախատեսված բազմաթիվ պարամետրեր ցույց են տալիս, որ դրանք, կարծես թե, ընտրվել են կամայականորեն, սահմանելով այնպիսի խտրական չափանիշներ և տիրույթներ, որպեսզի համապատասխանեն բացառապես Agilent 7890 սարքի պարամետրերին:

Օրինակ, Ընթացակարգի հրավերով ճնշման տիրույթը սահմանվել է հենց 0.001-150PSI, մինչդեռ այդ ճնշման տիրույթին համապատասխանում է բացառապես Agilent 7890 սարքի պարամետրը, իսկ մյուս արտարդրող ընկերությունների այդ պարամետրն է՝ 0-140, 0-150, 0-145 PSI:

Կամ, օրինակ, Հրավերով գազերի հոսքի տիրույթները ջրածնի համար սահմանվել է 0-1250 մլ/ր, մինչդեռ այդ ճնշման տիրույթին համապատասխանում է Agilent 7890 սարքի պարամետրը, իսկ մյուս արտարդրող ընկերությունների այդ պարամետրն է՝ 0-1200մլ/ր, 0 -1300մլ/ր, 5-1200մլ/ր և այլն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը...:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով, «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը՝ առաջին չափաբաժնի մասով ապրանքի տեխնիկական բնութագիրը, խրախուսում մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցությունը, մրցակցության հավասար պայմաններ չի ապահովվում հնարավոր մասնակիցների համար: Ավելին, ըստ էության ուղղակի հղում չկատարելով կոնկրետ արտադրողի վրա, Հրավերով գնման առարկայի համար սահմանվել են այնպիսի պարամետրեր, որոնք իրենց համակցության մեջ համապատասխանում են բացառապես կոնկրետ մեկ արտադրողի ապրանքին:

Հարգելի՛ պարոն Օհանյան, Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն կարևորագույն հանգամանքի վրա, որ սույն բողոքով վիճարկվող ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ով հանդիսանում է ՀՀ-ում Agilent ընկերության միակ պաշտոնական ներկայացուցիչը, ինչը վկայում է, որ Հրավերը խտրական է և հանգեցրել է մրցակցության վերացմանը:»:

3. <u>«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.11.2019թ.-ի գրությամբ դիմել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 06.11.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 12.11.2019թ.-ին թիվ Մ-50832-2019 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀԱՊՀ հիմնադրամի կարիքների համար լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախատեսվում է ձեռք բերել լաբորատոր-հետազոտական սարքեր համալսարանի միջազգային գիտա-տեխնոլոգիական դրամաշնորհային ծրագրի կարիքների համար:

Քննարկման ներկայացված «Իմունոֆարմ» ՍՊԸ-ի բողոքում, «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» 1-ին չափաբաժնով գնման առարկա հանդիսացող «Գազային քրոմատագիր սպասարկված բոցաիոնային դետեկտորով, մազանոթային աշտարակներով և ավտոմատացված նմուշարկչով. Կոմպլեկտը ներառում է՝ գազերի միացման և ֆիլտրման անհրաժեշտ հանգույցները և սարքի ծրագրային ապահովումը» լաբորատոր սարքի համար որպես «որևէ կոնկրետ ֆիրմայի պատկանող մոդելի տվ/ալներ»-ի օրինակներ նշվում են.

Աշտարակի վառարանի (թերմոստատ) սառեցման ժամանակը - 450 °Շ-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3,5 րոպե,

(բողոքում նշված է «ապրանքի սառեցման ժամանակ, ոչ ավելի 3,5րոպե», տես էջ 4).

- Բերված ցուցանիշը հանդիսանում է գնման ենթակա սարքի ժամանակակից մոդելների համար տվյալ տեխնիկական պարամետրի միջինացված արժեք, այս սարքի տարբեր մոդելներ բնութագրված են նաև բարելավված ցուցանիշներով՝ սկսած 3,3 րոպեից:

Խորշիկներ Split/splitless համակարգի համար՝ ճնշման տիրույթը՝ 0.001 -150 psi.

- *Բոցա-իոնային դետեկտոր (FID), Գծային դինամիկ տիրույթը - ոչ պակաս 107(բողոքում նշված է 10, տես էջ 4).*

Բերված ցուցանիշը ևս հանդիսանում է գնման ենթակա սարքի մոդելների համար տվյալ տեխնիկական պարամետրի ամենատարածված միջակայքը և հնարավորություններ է ընձեռում, սարքը արդյունավետ շահագործել կախված առաջադրված խնդիրներից: Այս արժեքը, որպես ամենատարածվածը, անգամ բերված է Բոցա-իոնային դետեկտոր (FID)-ˆj նվիրված Վիկիպեդիայի էջում (տես https://en.wikipedia.org/wiki/Flame ionization detector).

Խորշիկներ Split/splitless համակարգի համար՝

Գազերի հոսքի տիրույթներ՝

- *0 - 500 մլ/ր - ազոտի համար,*
- *0 -1250 մլ/ր - ջրածնի համար*

Բոցա-իոնային դետեկտոր (FID),

- *Օդ-ի հոսքի միջակայկաքը - 0-800 ml/min*

- Գազային քրոմատագրի նշված հանգույցների արդյունավետ աշխատանքի և առաջադրված խնդիրների լուծման համար գազային հոսքերի բերված արժեքային միջակայքերը հանդիսանում է գնման ենթակա սարքի ժամանակակից մոդելների համար տվյալ տեխնիկական պարամետրի միջինացված արժեքներ, այս սարքի ժամանակակից մոդելները բնութագրված են նաև բարելավված ցուցանիշներով՝ ավելի ընդարձակ տիրույթներով:

Այսպիսով, ակնհայտ է, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» ձևակերպման ժամանակ 1-ին չաափաբաժնով գնման առարկա հանդիսացող լաբորատոր սարքի տեխնկական պահանջները ներկայացված են մի-շարք արտադրող առաջավոր ընկերությունների (Շիմադզու, Աջիլենտ, Քրոմատեկ և այլն) շուկայում առկա բազմաթիվ մոդելների տեխնիկական բնութագրերում:

Հարկ ենք համարում նշել, որ «Իմունոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից անգամ չի իրացվել պաշտոնական հարցման օգնությամբ պարզաբանման համար նախատեսված գործառույթը, իրենց կողմից նշված ինչ-ինչ վիճելի բնութագրերի ճշգրտման համար: Ավելացնեմ նաև, որ բողոքաբերը ներկայացնելով առարկություններ միայն «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 1-ին չափաբաժնով սահմանված լաբորատոր սարքի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ, անհասկանալի պատճառներով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է նշված ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնման անբորլջ ընթացակարգը՝ իր բոլոր 4 չափաբաժիններով:

Եվս մեկ անգամ շեշտում ենք, որ բողոքաբերի պահանջը բացարձակ անհիմն է, իսկ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի»-ի կազմման ժամանակ որևէ կերպ չի խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:»:

Պատվիրատուն 28.11.2019թ.-ին թիվ 01/13.1/2194-19 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Իմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 20.11.2019թ. ներկայացված «Ի լրումն» բողոքի նախ, մեկ անգամ ևս անհրաժեշտ եմ համարում նշել, որ ՀՄՊՀ

հիմնադրամի կարիքների համար լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարված "ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29" ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախատեսվում է ձեռք բերել լաբորատոր- հետազոտական սարքեր՝ համալսարանի միջազգային գիտա-տեխնոլոգիական դրամաշնորհային ծրագրի կարիքների համար: Սարքերը նախատեսվում են բազմաբնույթ գիտական խնդիրների լուծման համար և այդ պատճառով գնանաշման ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ում ներկայացվել են արտասահմանյան գործընկեր կազմակերպության մասնագետների հետ քննարկված, համաձայնեցված և հետազոտական ծրագրի օրացուցային պլանով նախատեսված խնդիրների լուծումներն ապահովող սարքավորումներին առաջադրվող տեխնիկական պայմաններ-բնութագրերը: Վերջիններս հնարավորություններ են ընձեռում սարքերը հետագայում նոր հանգույցներով համալրելու և կախված լուծման ենթակա խնդիրներից՝ ձեւափոխելու համար: Վերոգրյալի հիման վրա անհիմն են բողոքաբերի այն պնդումները թե նրանց հայտնի են «լաբորատոր սարքերի օգտագործման արդյունքում պատվիրատուի կողմից ակնկալվող արդյունքները» (տես բողոք ԳԲՔԱ-ԼՕ-2019/86, 06.11.2019' էջ 4, 2-րդ պարբերություն):

Գնման ենթակա սարքավորմանը առաջադրվող գիտա՛տեխնիկական պահանջների բավարարման, շուկայում առկա հին մոդելների գնման հնարավոր սցենարի բացառման և նախահաշվային գնի սահմաններում առավել կոմպլեկտավորված սարքավորման ձեռքբերման նպատակով իրականացվել է շուկայում առկա ժամանակակից-նոր մոդելների տեխնիկական բնութագրերի համեմատական վերլուծություն և ձևակերպվել է գնման առարկա հանդիսացող քրոմատագրման սարքի (հավաքածու) համար սահմանված տեխնիկական պարամետրեր- բնութագրերը:

Ձեր քննարկմանն եմ ներկայացնում համեմատական վերլուծության արդյունքները, կից հավելված 1-ում: Բերված տվյալները միանշանակ վկայում են, որ քրոմատագրման սարքին առաջադրված տեխնիկական բնութագրերին բավարարում են առաջավոր ընկերությունների (Shimadzu, Agilent, Chromateck) շուկայում առկա, հասանելի, վերջին արտադրությունների (բարելավված ցուցանիշներով) առնվազը երեք ժամանակակից մրցակցային մոդելներ՝ Agilent 7890 GC, Shimadzu 2030Nexis GC և Chromateck 9000 GC:

Նշենք, որ անընդունելի են բողոքաբերի ԳԲՔԱ-ԼՕ-2019/86, 06.11.2019 թ-ի բողոքի «Ի ԱՐՈՒՍՆ» գրությունում (ներկայացված 20.11.2019թ-ի, «Իմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից լիազոր ներկայացուցիչ «Գնումների աջակցության կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Պապիկյանի կողմից) բերված տեխնիկական ցուցանիշների համեմատական աղյուսակում խեղաթյուրված, մանիպուլատիվ տվյալները՝ օր. Shimadzu 2030Nexis GC մոդելի համար

նշված է 0-1034 (իրականում՝ 1035, տես սույն գրության կից հավելված 1-ում բերված հղումը) kPa=0-150 Psi, կամ Chromateck 5000/9000 սյունակում նշված են բացառապես Chromateck 5000 ավելի հին մոդելի տվյալները:

Ակնհայտ է, որ անհիմն են բողոքաբերի այն պնդումները, թե հայտում ներկայացված են «որևէ կոնկրետ ֆիրմայի պատկանող մոդելի տվյալներ»: Գազային քրոմատագիր սպասարկված բոցաիոնային դետեկտորով, մազանոթային աշտարակներով և ավտոմատացված նմուշարկչով հավաքածուն ներառում է՝ գազերի միացման և ֆիլտրման անհրաժեշտ հանգույցներ և սարքի ծրագրային ապահովում, որըհամապատասխանում է երեք արտադրող ընկերությունների (Shimadzu, Agilent, Chromateck) առնվազը 3 մոդելների տեխնիկական բնութագրերին և վերջիններս ապահովում են դրամաշնորհային-պայմանագրային ծրագրի խնդիրների պահանջների բավարարման:

Եվս մեկ անգամ շեշտում ենք, որ բողոքաբերի պահանջը բացարձակ անհիմնէ, իսկ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի կազման ժամանակ որևէ կերպ չի խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները:»:

Վերոնշյալ դիրքորոշմամբ ներկայացված կից հավելված 1-ի համաձայն՝ «

№	Հրավերով սահմանված ցուցանիշ	Agilent 7890 GC	Shimadzu 2030Nexis GC	Chromateck 9000 GC	Մեկնաբանություն
1	Ճնշման տիրույթը՝ 0 - 150 psi	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է ճնշման տիրույթը՝ 0-150 psi https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-1436EN.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է ճնշման տիրույթը՝ 0-150 psi[0 to 1050 кPa (0 to 150 psi)] ճշգրիտ արժեքը՝ 1035 kPa= 150,114psi https://www.shimadzu.ru/sites/shimadzu.seg/files/SMO/pdf-flyers/GC-2030-flyer-11.2019.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է ճնշման տիյայթը՝ 0-152 psi [0 to 1050 кPa (0 to 152 psi)] http://www.chromatec-instruments.com/upload/iblock/088/ChromatecCrystal9000 01.pdf	3 արտադրողի ցուցանիշները համապատասխանում են հրավերով սահմանված ցուցանիշին
2	Գազերի հոսքի տիրույթները 0-500մլ/ր - ազոտի N2համար 0-1250 մլ/ր- ջրածնիH2համար	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Total flow setting range: 0 to 500 mL/min N2 0 to 1250 mL/min H2 https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-1436EN.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է գազերիտիրույթը 0 to 600 mL/minN2 0 to 1300 mL/min H2 https://www.shimadzu.ru/sites/shimadzu.seg/files/SMO/pdf-fiyers/GC-2030-fl yer-11.2019.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է գազերիտիրույթը 0 to 1250 mUmin H2; N2 http://www.chromatec-instruments.com/upload/iblock/088/ChromatecCrystal9000 OLpdf	3 արտադրողի ցուցանիշները համապատասխանում են հրավերով սահմանված ցուցանիշին

3	Սառեցման ժամանկը՝ 450 °C-ից մինչև 50°C ոչ ավելյւ քան 3.5 րոպե	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Սառեցման ժամանկը՝ 450 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3.5 րոպե https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-1436EN.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Սառեցման ժամանկը՝ 450 °C- ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3.4 րոպե https://www.shimadzu.ru/sites/shimadzu.seg/files/SMO/pdf-fiyers/ GC-2030-flyer-11.2019.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Սառեցման ժամանկը՝ 450 °C- ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3.3 րոպե http://www.chromatec-instruments.com/upload/iblock/088/ChromatecCrystal9000 Ol.pdf	3 արտադրողի ցուցանիշները համապատասխանում են հրավերով սահմանված ցուցանիշին
4	Բոցա-իոնային դետեկտոր /ԲԻԴ/ Տվյալների գրանցում - մինչև 500 Հg Օդի հիսքի տիրույթը՝ 0-800 մլ/ր H2-ի հոսքի տիրույթը՝ 0-100 մլ/ր Օժանդակ գազի հոսքի Տիրույթը՝0-100 մլ/ր	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Տվյալների գրանցում - մինչև 500 Հg Օդի հիսքի տիրույթը՝ 0-800 մլ/ր H2-ի հոսքի տիրույթը՝ 0-100 մլ/ր Օժանդակ գազի հոսքի Տիրույթը՝0-100 մլ/ր https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-1436EN.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Տվյալների գրանցում - մինչև 500 Հg Օդի հիսքի տիրույթը՝ 0-1000 մլ/ր H2-ի հոսքի տիրույթը՝ 0-100 մլ/ր Օժանդակ գազի հոսքի Տիրույթը՝0-100 մլ/ր https://www.shimadzu.ru/sites/shimadzu.seg/files/SMO/pdf-flyers/GC-2030-flyer-11.2019.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Սառեցման ժամանկը՝ Տվյալների գրանցում - մինչև 300 Հg Օդի հիսքի տիրույթը՝ 0-800մլ/ր H2-ի հոսքի տիրույթը՝ 0-500 մլ/ր https://www.chromatec-instruments.com/upload/iblock/88/ChromatecCrystal19000 01.pdf	3 արտադրողի ցուցանիշները համապատասխանում են հրավերով սահմանված ցուցանիշին
5	Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ՝ Առնվազն 16 հատ 2մլ սրվակ Ներարկման ծավալը՝ ավելի քան 100մկլ Հնարավորություն 250/500 մկլ / օպցիոնալ ներարկում/	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ՝ 16 հատ 2մլ սրվակ Ներարկման ծավալը ավելի քան 100մկլ Հնարավորություն 250/500 մկլ / օպցիոնալ ներարկում https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-1436EN.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ՝ 96 հատ 4մլ սրվակ Ներարկման ծավալը՝ 2.5~200uL, 2.5рL, steps (using 250рL, syringe) http://www.shim-pol.pl/pliki/produkty/Shimadzu/C189-E0211.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ՝ 150 հատ 2մլ սրվակ Ներարկման ծավալը 0.5, 1,5, 10, 100, 250 рl http://www.chromatec-instruments.com/upload/iblock/616/AS 3D Liquid dataSheet.pdf	3 արտադրողի ցուցանիշները համապատասխանում են հրավերով սահմանված ցուցանիշին
6	Քրոմատոգրաֆիկ արդյունավետություն a)Մակերեսի վերարտադրելիությունը - քիչ քան 1% RSD b) ներարկման վերարտա-դրելիությունը - ավելի լավ քան 0.008% RSD c) ներարկման գծայնությունը - քիչ քան 1% RSD	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Մակերեսի վերարտադրելիությունը - քիչ քան 1% RSD b) ներարկման վերարտադրելիությունը - ավելի լավ քան 0.008% RSD c) ներարկման գծայնությունը - քիչ քան 1% RSD https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-1436EN.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Մակերեսի վերարտադրելիությունը - քիչ քան 1% RSD b) ներարկման վերարտադյուելիությունը - ավելի լավ քան 0.008% RSD c) ներարկման գծայնությունը-քիչ քան 1% RSD https://www.shimadzu.com.sg/an/sites/shimadzu.com.sg.an/files/hterature/NexisGC-2030-SpecificationSheet.pdf	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Մակերեսի վերարտադրելիությունը - քիչ քան 1% RSD b) ներարկման վերարտադրելիությունը - ավելի լավ քան 0.008% RSD c) ներարկման գծայնությունը - քիչ քան 1% RSD http:// www. chromatec-instruments.com/upload/iblock/be9/Crystal -9000.pdf	3 արտադրողի ցուցանիշները համապատասխանում են հրավերով սահմանված ցուցանիշին

7	*Ստանդարտ և աշտարակների վրա ներարկման մեթոդներ* *Ծրագրավորվող տարալուծման, արտահանման, և ներերկման հնարավորություն*	*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Ստանդարտ և աշտարակների վրա ներարկման մեթոդներ Ծրագրավորվող տարալուծման, արտահանման, և ներերկման հնարավորություն https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-1436EN.pdf*	*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Ստանդարտ և աշտարակների վրա ներարկման մեթոդներ Ծրագրավորվող տարալուծման, արտահանման, և ներերկման հնարավորություն https://www.shimadzu.com.sg/an/sites/shimadzru.com.sg.a n/ files/literature/NexisGC-2030-SpecificationSheet.pdf*	*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է Ստանդարտ և աշտարակների վրա ներարկման մեթոդներ Ծրագրավորվող տարալուծման, արտահանման, և ներերկման հնարավորություն http://www.chromatec-instruments.com/upload/iblock/be9/Crystal-9000.pdf*	3 արտադրողի ցուցանիշները համապատասխանում են հրավերով սահմանված ցուցանիշին

հրավերով պահանջված լաբորատոր սարք գազային քրոմատագիրը իր բոլոր պահանջներով համապատասխանում է առնվազն երեք արտադրող ընկերությունների ցուցանիշներին դրանով իսկ ապահովելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի բոլոր պահանջները:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/86 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով 31.10.2019թ.-ին հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 07.11.2019թ.-ին:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 1-ին չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը.

Ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Գազային քրոմատագիր սպասարկված բացահոնային դետեկտորով, մազանոթային աշտարակներով և ավտոմատացված նմուշարկչով. Կոմպլեկտը ներառում է՝ գազերի միացման և ֆիլտրման անհրաժեշտ հանգույցները և սարքի ծրագրային ապահովումը»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝

«Բաղադրիչների նկարագրերը.

Աշտարակի վառարան (թերմոստատ)

- *Երկու և ավելի աշտարակի տեղադրման հնարավորություն*
- *Աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը - +4-ից ÷ 450 °C*
- *Ջերմաստիճանի կարգավորման ճշտությունը - ոչ պակաս 0.1 °C*
- *Տաքացման արագությունը - ոչ պակաս 120 °C/րոպե*
- *Սառեցման ժամանակը - 450 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3,5 րոպե*
- *Փուլի տևողության առավելագույն ժամանակը - 999.99 րոպե*
- *Ջեռոցում ծրագրային տաքացման հնարավորություն - ոչ պակաս քան 20 ռեժիմ:*

Խորշիկներ Split/splitless համակարգ՝ ոչ պակաս քան երկու խորշիկ.

- *Հաստատուն ճնշմամբ աշխատանք*
- *Ճնշման/հոսքի էլեկտրոնային ղեկավարում*
- *Սեպտաների օդափոխություն*
- *Ճնշման տիրույթը՝ 0.001 – 150 psi*
- *Ներկառուցված արտահոսքի/խցանման, ճնշման անկման և բաժանված հոսքի սահմանափակման ախտորոշման հնարավորություն*
- *Առավելագույն աշխատանքային ջերմաստիճան՝ 450 °C*
- *Գազի հոսքի բաժանման(split-ի) արժեքը – ոչ պակաս 7500:1*
- *Գազերի հոսքի տիրույթներ՝ 0 – 500 մլ/ր – ազոտի համար,*
  0 - 1250 մլ/ր – ջրածնի համար

Մազանոթային աշտարակներ.

1-ին աշտարակ՝ 30 m, 0.25 mm, 0.25-0.5 μm , PTA5 կամ համարժեք,
2-րդ աշտարակ՝ 30 m, 0.25 mm, 0.25-0.5 μm , DB-WAX կամ համարժեք.

Բոցա-իոնային դետեկտոր (FID)

- *Առավելագույն աշխատանքային ջերմաստիճան - ոչ պակաս 450 °C*
- *Հայտնաբերման (detection) նվազագույն արժեքը (ստանդարտ՝ տրիդեկանի համար) - < 1.4 pg C/s*
- *Գծային դինամիկ տիրույթը - ոչ պակաս 10^7*
- *Մինչև 500 Հg հաճախությամբ տվյալների գրանցման հնարավորություն*
- *Օդ-ի հոսքի միջակայկաքը - 0-800 ml/min*
- *H_2-ի հոսքի միջակայկաքը - 0-100 ml/min*
- *Օժանդակող գազի հոսքի միջակայկաքը- 0-100 ml/min*

Այլ բնութագրեր

- *LAN ինտերֆեյսի հնարավորություն*
- *Հեռակա միացման/անջատման հնարավորություն*
- *առնվազը 2 USB պորտի առկայություն*

Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ

Ավտոմատացված հեղուկային նմուշարկչի տարողունակությունը- առնվազը 16 հատ 2 մլ ծավալով վիալ նմուշների
համար

Ներարկման ծավալները

• ավելի քան 100 μL ստանդարդ ներարկման ասեղներով հնարավորություն
• 250/500 μL օպցիոնալ ներարկման հնարավորությամբ բազմածավալ ներարկման հնարավորություն

Քրոմատագրաֆիկ արդյունավետություն

Մակերեսի վերարտադրելիություն - քիչ քան 1% RSD
Ներակման վերարտադրելիություն – ավելի լավ քան 0.008% RSD
Ներակման գծայնություն – քիչ քան 1% RSD
Տեղափոխում – քիչ քան մեկ մասնիկ 100000-ից

Ստանդարտ և աշտարակի վրա ներարկման մեթոդներ

Ամբողջովին ծրագրավորվող տարալուծման, արտահանման և ներարկման հնարավորության առկայություն
Արագ ներարկումներ - ոչ ավելի քան 100 մվ-ից
Հատուկ ադապտերի միջոցով 250 և 500 μL ներարկիչները տեղադրման հնարավորություն
Օպերատորի ընտրությամբ 2 կամ 3 շերտանի նմուշի հավաքման հնարավորություն (sandwich)
Ստանդարտ դիրքից պակաս և ավելի նմուշառման խորության ընտրություն հնարավորություն
0-ից 15 լվացման հնարավորություն A և B լուծիչների համար
Ներարկման արագությունների կարգավորման հնարավորություն - արագ/դանդաղ/ծրագրավորվող

Ծրագրային ապահովում

Լիցենզավորված ծրագրային ապահովման տրամադրում: Այն պետք է ապահովի՝ քրոմատագրաֆիկ վերլուծության տվյալների հավաքագրումը, մշակումը ու պահպանման հնարավորությունը, անալիտիկ սարքավորման ամբողջական համատեղելիությունը GLP, GMP ստանդարտների հետ:

Անվտանգություն և սերտիֆիկացիա

Վկայագրումը Համապատասխանի հետևյալ միջազգային անվտանգության չափանիշներին՝

• Նախագծված եւ արտադրված լինի համաձայն ISO 9001-ի որակի վերահսկման համակարգի պահանջների,

• Ապահովի համապատասխանություն ANSI / UL 61010-1, Միջազգային Էլեկտրատեխնիկական Հանձնաժողովի (IEC) 61010-1,60101-2-010, 60101-2-081, Էլեկտրամագնիսական Համատեղելիության (EMC) և Ռադիոհաճախականության Միջամտություն (RFI)՝ CISPR 11 / EN 55011: 1-ին դասԱ և IEC / EN 61326 կանոնակարգերի (կամ համարժեք ԵԱՏՄ TP TC 004/2011 և TP TC 020/2011) պահանջներին:

Մատակարարում, Կարգաբերում, Երաշխիքային և Տեխնիկական Սպասարկում

Ներառում է առաքումը, մաքսազերծումը, ԱԱՀ, 1 տարի երաշխիքային սպասարկում, տեղադրում, կարգաբերում, սպասարկող անձնակազմի ուսուցանումը և ուսուցման սերտիֆիկատների տրամադրումը:

Երաշխիքային և ընթացիկ տեխնիկական սպասարկման իրականացում՝ ՀՀ-ում պաշտոնական գրանցված և սերտիֆիկացված մասնագետի կողմից:

Ժամկետներ՝

Մատակարարում - ձեռքբերման պայմանագրի կնքիմուց սկսած 20 օրվա ընթացքում

Տեխնիկական սպասարկում - անսարքությունների մասին իրազեկումից հետո դրանց վերացում 2 օրվա ընթացքում:»:

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին չեն համապատասխանում Պատվիրատուի կողմից իր դիրքորոշմանը կից ներկայացված հավելված 1-ում նշված արտադրողները:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել միայն 1 (մեկ) մասնակից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 06.11.2019թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա ամբողջությամբ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից լաբորատոր սարքերի ձեռքբերման նպատակով 31.10.2019թ.-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, իսկ հայտերի բացման նիստի օր է սահմանվել 07.11.2019թ.-ին:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 1-ին չափաբաժնի համար սահմանվել է հետևյալը.

Ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«Գազային քրոմատագիր սպասարկված բացահոնային դետեկտորով, մազանոթային աշտարակներով*

և ավտոմատացված նմուշարկչով. Կոմպլեկտը ներառում է՝ գազերի միացման և ֆիլտրման անհրաժեշտ հանգույցները և սարքի ծրագրային ապահովումը»: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝

*«**Բաղադրիչների նկարագրերը.***

<u>Աշտարակի վառարան (թերմոստատ)</u>

- *Երկու և ավելի աշտարակի տեղադրման հնարավորություն*
- *Աշխատանքային ջերմաստիճանի միջակայքը - +4-ից ÷ 450 °C*
- *Ջերմաստիճանի կարգավորման ճշտությունը - ոչ պակաս 0.1 °C*
- *Տաքացման արագությունը - ոչ պակաս 120 °C/րոպե*
- *Սառեցման ժամանակը - 450 °C-ից մինչև 50 °C ոչ ավելի քան 3,5 րոպե*
- *Փուլի տևողության առավելագույն ժամանակը - 999.99 րոպե*
- *Ջեռոցում ծրագրային տաքացման հնարավորություն - ոչ պակաս քան 20 ռեժիմ:*

<u>Խորշիկներ Split/splitless համակարգ՝ ոչ պակաս քան երկու խորշիկ.</u>

- *Հաստատուն ճնշմամբ աշխատանք*
- *Ճնշման/հոսքի էլեկտրոնային ղեկավարում*
- *Սեպտաների օդափոխություն*
- *Ճնշման տիրույթը՝ 0.001 – 150 psi*
- *Ներկառուցված արտահոսքի/խցանման, ճնշման անկման և բաժանված հոսքի սահմանափակման ախտորոշման հնարավորություն*
- *Առավելագույն աշխատանքային ջերմաստիճան՝ 450 °C*
- *Գազի հոսքի բաժանման(split-ի) արժեքը – ոչ պակաս 7500:1*
- *Գազերի հոսքի տիրույթներ՝ 0 – 500 մլ/ր – ազոտի համար,*
  0 - 1250 մլ/ր – ջրածնի համար

<u>Մազանոթային աշտարակներ.</u>

1-ին աշտարակ՝ 30 m, 0.25 mm, 0.25-0.5 μm , PTA5 կամ համարժեք,
2-րդ աշտարակ՝ 30 m, 0.25 mm, 0.25-0.5 μm , DB-WAX կամ համարժեք.

<u>Բոցա-իոնային դետեկտոր (FID)</u>

- *Առավելագույն աշխատանքային ջերմաստիճան - ոչ պակաս 450 °C*
- *Հայտնաբերման (detection) նվազագույն արժեքը (ստանդարտ՝ տրիդեկանի համար) - < 1.4 pg C/s*
- *Գծային դինամիկ տիրույթը - ոչ պակաս 10^7*
- *Մինչև 500 Հց հաճախությամբ տվյալների գրանցման հնարավորություն*
- *Օդ-ի հոսքի միջակայկաքը - 0-800 ml/min*
- *H_2-ի հոսքի միջակայկաքը - 0-100 ml/min*
- *Օժանդակող գազի հոսքի միջակայկաքը- 0-100 ml/min*

<u>Այլ բնութագրեր</u>

- *LAN ինտերֆեյսի հնարավորություն*
- *Հեռակա միացման/անջատման հնարավորություն*
- *առնվազը 2 USB պորտի առկայություն*

<u>Ավտոմատացված հեղուկային նմուշարկիչ</u>

Ավտոմատացված հեղուկային նմուշարկչի տարողունակությունը- առնվազը 16 հատ 2 մլ ծավալով վիալ նմուշների
համար

<u>Ներարկման ծավալները</u>

• ավելի քան 100 μL ստանդարտ ներարկման ասեղներով հնարավորություն
• 250/500 μL օպցիոնալ ներարկման հնարավորությամբ բազմածավալ ներարկման հնարավորություն

<u>Քրոմատագրաֆիկ արդյունավետություն</u>

Մակերեսի վերարտադրելիություն - քիչ քան 1% RSD
Ներակման վերարտադրելիություն – ավելի լավ քան 0.008% RSD
Ներակման գծայնություն – քիչ քան 1% RSD
Տեղափոխում – քիչ քան մեկ մասնիկ 100000-ից

<u>Ստանդարտ և աշտարակի վրա ներարկման մեթոդներ</u>

Ամբողջովին ծրագրավորվող տարալուծման, արտահանման և ներարկման հնարավորության առկայություն
Արագ ներարկումներ - ոչ ավելի քան 100 մվ-ից
Հատուկ ադապտերի միջոցով 250 և 500 μL ներարկիչները տեղադրման հնարավորություն
Օպերատորի ընտրությամբ 2 կամ 3 շերտանի նմուշի հավաքման հնարավորություն (sandwich)

Ստանդարտ դիրքից պակաս և ավելի նմուշառման խորության ընտրություն հնարավորություն 0-ից 15 լվացման հնարավորություն A և B լուծիչների համար

Ներարկման արագությունների կարգավորման հնարավորություն - արագ/դանդաղ/ծրագրավորվող

<u>Ծրագրային ապահովում</u>

Լիցենզավորված ծրագրային ապահովման փրամադրում: Այն պետք է ապահովի՝ քրոմատագրաֆիկ վերլուծության փվյալների հավաքագրումը, մշակումը ու պահպանման հնարավորությունը, անալիտիկ սարքավորման ամբողջական համատեղելիությունը GLP, GMP ստանդարտների հետ:

<u>Անվտանգություն և սերտիֆիկացիա</u>

Վկայագրումը Համապատասխանի հետևյալ միջազգային անվտանգության չափանիշներին՝

• Նախագծված եւ արտադրված լինի համաձայն ISO 9001-ի որակի վերահսկման համակարգի պահանջների,

• Ապահովի համապատասխանություն ANSI / UL 61010-1, Միջազգային Էլեկտրատեխնիկական Հանձնաժողովի (IEC) 61010-1,60101-2-010, 60101-2-081, Էլեկտրամագնիսական Համատեղելիության (EMC) և Ռադիոհաճախականության Միջամտություն (RFI)՝ CISPR 11 / EN 55011: 1-ին դասԱ և IEC / EN 61326 կանոնակարգերի (կամ համարժեք ԵԱՏՄ TP TC 004/2011 և TP TC 020/2011) պահանջներին:

<u>Մատակարարում, Կարգաբերում, Երաշխիքային և Տեխնիկական Սպասարկում</u>

Ներառում է առաքումը, մաքսազերծումը, ԱԱՀ, 1 տարի երաշխիքային սպասարկում, տեղադրում, կարգաբերում, սպասարկող անձնակազմի ուսուցանումը և ուսուցման սերտիֆիկատների տրամադրումը:

Երաշխիքային և ընթացիկ տեխնիկական սպասարկման իրականացում՝ ՀՀ-ում պաշտոնական գրանցված և սերտիֆիկացված մասնագետի կողմից:

Ժամկետներ՝

Մատակարարում - ձեռքբերման պայմանագրի կնքիմուց սկսած 20 օրվա ընթացքում

Տեխնիկական սպասարկում - անսարքությունների մասին իրազեկումից հետո դրանց վերացում 2 օրվա ընթացքում:»:

Վերոնշյալ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի պայմաններին չեն համապատասխանում Պատվիրատուի կողմից իր դիրքորոշմանը կից ներկայացված հավելված 1-ում նշված արտադրողները, մասնավորապես, օրինակ՝

Հրավերով սահմանված ցուցանիշ	*Agilent 7890 GC*	*Shimadzu 2030Nexis GC*	*Chromateck 9000 GC*	*Մեկնաբանություն*
Ճնշման փիրույթը՝ ***0 - 150 psi***	*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է, ճնշման փիրույթը՝ 0-150 psi https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-1436EN.pdf*	*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է, ճնշման փիրույթը՝ 0-150 psi[0 to 1050 кPa (0 to 150 psi)] ճշգրիտ արժեքը՝ 1035 kPa= 150,114psi https://www.shimadzu.ru/sites/shimadzu.seg/files/SMO/pdf-flyers/GC-2030-flyer-11.2019.pdf*	*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է* ***ճնշման փիրույթը՝ 0-152 psi [0 to 1050 кPa (0 to 152 psi)]*** *http://www.chromatec-instruments.com/upload/iblock/088/ChromatecCrystal9000 01.pdf*	*3 արտադրողի ցուցանիշները համապատասխանում են հրավերով սահմանված ցուցանիշին*
Գազերի հոսքի փիրույթները ***0-500մլ/ր - ազոտի N2համար 0-1250 մլ/ր-*** *ջրածնի H2համար*	*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է, Total flow setting range: 0 to 500 mL/min N2 0 to 1250 mL/min H2 https://www.agilent.com/cs/library/datasheets/public/5991-1436EN.pdf*	*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է, գազերի փիրույթը* ***0 to 600 mL/minN2 0 to 1300 mL/min H2*** *https://www.shimadzu.ru/sites/shimadzu.seg/files/SMO/pdf-fiyers/GC-2030-fl yer-11.2019.pdf*	*ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ է, գազերի փիրույթը 0 to 1250 mL/min H2; N2 http://www.chromatec-instruments.com/upload/iblock/088/ChromatecCrystal9000 OLpdf*	*3 արտադրողի ցուցանիշները համապատասխանում են հրավերով սահմանված ցուցանիշին*

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված

պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները չեն ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը,

սահմանափակում են ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը, հիմնված չեն գնման գործընթացի մրցակցային, համաչափ, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, որն էլ առաջացրել է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների:

Այսպես՝ Պատվիրատուի կողմից տրված դիրքորոշման հավելված 1-ով նշվել է, որ Ընթացակարգի հավելված 1-ով սահմանված 1-ին չափաբաժնով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրին համապատասխանում են առնվազն 3 արտադրողների՝ Agilent 7890 GC, Shimadzu 2030Nexis GC, Chromateck 9000 GC սարքավորումների բնութագրերին:

Ընդ որում Պատվիրատուի կողմից գործի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացվեցին համապատասխան ապացույցներ, առ այն, որ Agilent 7890 GC, Shimadzu 2030Nexis GC և Chromateck 9000 GC արտադրողների սարքավորումների բնութագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմաններին և պահանջներին:

Օրինակ՝ Հրավերով սահմանված ճնշման տիրույթը՝ 0 - 150 psi ցուցանիշին չի համապատասխանում Chromateck 9000 GC արտադրողի սարքավորման բնութագիրը, որը կազմում է՝ 0-152 psi: Իսկ գազերի հոսքի տիրույթները 0-500մլ/ր – ազոտի՝ N2 համար ու 0-1250 մլ/ր- ջրածնի՝ H2 համար ցուցանիշները չեն համապատասխանում Shimadzu 2030Nexis GC արտադրողի սարքավորման բնութագրերը, որը կազմում է՝ 0 to 600 mL/minN2 ու 0 to 1300 mL/min H2:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ գնման ընթացակարգի հրավերով սահմանված 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագրերի պահանջներն անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 06.11.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/86 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել գնման ընթացակարգը՝ 1-ին չափաբաժնի մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**